

առաստեաց, փայլուն բայց տարտամ միտք՝
անհեռատես, ճարտասան ու մեամբը:

Արվիլին՝ Օսեանի եւ Ստեփան փաշայի
համախոհ մը ըլլալու էր:

Ասոնց մէջ ոչ մէկն ունէր Նուպարին յըս-
տակ, հետաւտես, սուր միտքը, գործնական
ողին, մաքմամբիլքական հաշուագործութիւնը,
ծրագիր մը ի գործ դնելու համար ունեցած
ճարտարութեան, անձնական հրապուրի ու արդէն
իսկ « եւրոպական մեծահոգեւոր սնունդ վայելող
ազգեցեղի անձնաւորութեան » առաւելութեան-
ները:

Ա. ՉՊԱՆԵԱՆ

(Ճարտնակեցի)



ՔՐՈՆԻԿ

Քուչակի մասին յօդուածս (որ կ'երեւայ
այս թիւին սկիզբը) գրելէ ետքն է որ զացքի վե-
նետիկ ֆրանսերէն նոր հատորի մը պատրաս-
թեան համար հին ձեռագիրներու մէջ նիւթեր
շնտեկու: Իմ այդ որոշ ծրագրին պատկանող
կտորներ հաւաքելով հանդերձ, քննելի նսեմ
ինչ որ կը վերաբերի աշուղական բանաստեղծ-
ութեան ընդհանրապէս եւ Քուչակին մասնա-
ւորապէս Քուչակի մասին այդ տոր քննութիւն-
ներս ինծի թելադրեցին կարգ մը նոր խորհրդա-
ւածութիւններ, զոր ուրիշ աղթիւ ի դիր կ'առ-
նեմ: Հոս կ'ուզեմ միայն մէկ երկու կէտ նշա-
նակել՝ այս թիւին մէջ հրատարակած յօդուա-
ծին մէկ քանի մասերուն հետ անմիջական կապ
ունեցող:

Իւր 171 ձեռագրին մէջ գտայ Վանցի Քու-
չակին Առ Ս. Աստուածածին տաղը, հետեւեալ
վերնագրով. « Սուրբ Աստուածածինն գովու-
թիւն ի Քուչակէ ի Հաղկուանդոյ »: Այդ վեր-
նագիրը շատ կարեւոր է. Հաղկուանդին Քու-
չակի եւ Վանցի Քուչակը նոյն անձն են ուրեմն,
որ հեղինակն է Առ Ս. Աստուածածին տաղին,
եւ կը հանդիս Խարակոնիս (Հաղկուանդ): Այլիպէս
« Հաղկուանդ » մականունը՝ զոր կը իջէ Յու-
շիկին մէջ՝ բողբոս է ուրեմն այս ձեռագրէն:
Եւ այդ Հաղկուանդի Քուչակը ոչ մէկ կապ
չունի ուրեմն մեզի ծանօթ սիրերգներու հեղի-
նակին հետ՝ որ ոչ Հաղկուանդն է, ոչ Վանցի,
այլ Ակնցի:

Ուրիշ նկատողութիւն մը. Քուչակեան
տաղաշարի թեան վրայ խօսելով, րաւ էի թէ
այդ տաղերը 5—5—5 ալ կրնան բաժնուիլ:
սեանելէ յետոյ Քուչակի անտիպ կտորները ու-
րոնք թագմաթիւ են եւ որոնցմէ մաս մը պիտի
հրատարակեմ Անսահիթի յատարկապ թիւին մէջ,
այդ կարծիքս ստիպուած եմ մէկդի դնել: Ենչդ
է որ թէ՛ տպուած եւ թէ՛ անտիպ տաղերուն ա-
մենատարած մեծամասնութիւնը 5—5—5 չա-
փին կը համաձայնի. բայց կը մնայ բուական
թիւ մը տղերու: Եւ տողեր անթերի, ամենամա-
քուր, ամենագեղեցիկ, այնպէս որ ընդորինակի
աղաւաղում կարելի չէ ենթադրել: Կը խորհիմ
ուրեմն որ 5—5—5ով այդ տաղաշարի թիւերը
բացատրելու վարկածն պէտք է հրաժարել, ու
յարած մնալ 7—8 չափին:

Ռազմիկի մայիս 15, 23 եւ 26 թիւերուն
մէջ հրատարակուած Ռուսմուղլիան Գէորգ վար-
դապետին գրութիւնը եկաւ լուսաւորել Ստե-
փան փաշայի նամակներէն մէկուն վերապա-
նունը Ներսէս Պատրիարքի մասին: Այս գրու-
թիւնն ունի անշուշտ ճշմարտութեան բաժին
մը, բայց լիցուն է ակնյայտին չափազանցութիւն-
ներով եւ անճշգրտութիւններով՝ զոր Պ. Տ. Տօղ-
րամաճեան շատ փաստացի կերպով ի վեր հա-
նեց Հուսաբերին մէջ: Անհերքելի կը թուի որ
Սան-Սթէֆանու Ներսէս Պատրիարքի պատմա-
կան դիմումէն առաջ, Ֆրիլիպի մէջ Ռուսմուղ-
լեան վարդապետը եւ յետոյ Ստեփան Աւարա-
նեան ու Նուբեան դիմել են Ռուսական զօրու-
թեան, — եւ այդ իրկաթիւֆի քրդաման իսկ
Այդ չի նշանակեր թէ ամէն բան Ֆրիլիպի մէջ
սկսած ու վերջացած է. Ներսէս պատրիարք
գիտցեր է ի կատար հանել ինչ որ Ֆրիլիպի մէջ
ուրուագծուած էր: Սան-Սթէֆանոի դաշնագրին
16րդ յօդուածին ստացման մէջ՝ եթէ միակ դե-
րակատարը չէ Ներսէս Պատրիարք, ամենին
կարեւոր դերակատարն է նորէն. առանց այն
յանդգնութեան զոր ունեցաւ ինք Հայոց պատ-
րիարք՝ անձամբ Սան-Սթէֆանու երթալու եւ
Ռուսական միջամտութիւնը խնդրելու: Ի նպաստ
թրքահայաստանի, 16րդ յօդուածը չէր կրնար
մտնել Սան-Սթէֆանոի դաշնագրին մէջ, Հոս
իր արժանիքը մեծ է. պէտք չէ որ անալ զայն:

Պ. Թաշանճեանի սպանման ցաւալի դէպ-
քին նուիրած իր յօդուածներէն մէկուն մէջ, Պ.
Արքիպիարեան կը իջէ ինչ որ գրած էի Ժամհար-
եանի սպանութեան առթիւ, եւ կը հրաւրէ
զիս որ խառնու եւ երկարօրէն, մանրամասնօրէն,
դատապարտեմ այս սպանութիւնը: Պ. Արքիպար-
եանի հրաւերին պէտք չունի անգամ մը եւս

գաղապարտելու համար արարք մը զոր միշտ հարուածած եմ : Պ. Թաւադեանն ինքն զոհ մըն է սպանաւորներու եւ սպանութեամբ այն յեղափոխական գործին համար զրամ գտնելու սխտեմին, զոր ի գործ դրած են շատ անգամներ Իրօշականին եւ հին Հնչակեան կուսակցութիւնները, եւ զոր՝ առաջին անգամ յոսպաւ ու գործայրեց Պոլսոյ Հնչակեան քովի թէն երբ Պ. Արփիարեանն այդ քովի թէն է « մարապուծ »-ն էր : Տիրաւն Գարակէօզեան, զոր Արփիարեանն եւ իր ընկերները սպանին թուին, առաջին մասնաւոր էր՝ նուիրուած հայ յեղափոխութեան սեղանին որուն նորագոյն ողջակէզն եղաւ : Պ. Թաւադեանն, Այդ սխտեմը միշտ պարտութիւն, անընդունելի, անտանելի է . « Երբ ըսած եմ եւ կը կրկնեմ, եւ այս հարցին մէջ կարծիքս այնքան որոշ է եւ անփոփոխ, որ երկայն ֆրազներու հարկ չկայ ընտել » :

Այդ զէպըր շատ ցաւալի է : Բայց միակ ցաւալի բանը՝ սպանութիւնը չէ այդ զէպըրն մէջ . շատ բարդ է հարցը . եւ որ կողմին քրննենք զայն, տիրելու պատճառներ պիտի գտնենք նա :

Այդ սպանութեամբ խեղճ մարդուն զիակին չուրդ երեւան եկած բարոյական աղիւնութիւնները նոյնքան ցաւալի են որքան նոյն ինքն սպանութիւնը : Հայրենիքը, որկան կուսակցութեան մը որ մինչեւ հիմա քանակ հարուած ապահոված է ճիշդ նոյն սխտեմով, բողոքի ազդեցիկներ կը բարձրացնէ : « մեծ ոճի » կ'անուանէ ինչ որ « յարք »-ի պէս — քստմիտ չարք — մէկ ուր թիւն է պարզապէս : Պ. Պարթեանն, որ մտքէն չանցուց բողոքել Արկի Ունեանին սպանութեան դէմ, որ այդ բարի, ազգասէր, բազմազուտ մարդուն խոլոսողովը իստ ընակաւ ու գովելի գտաւ . եւ անոր զիակին իստ պիտի գտնէր ֆրազներով, այսօր ռեպուտացիոն կ'անուանէ անոնք որոնք — եթէ ոճի էր առ — ռեպուտացիոն եղաւ երկէ . . . Եւ ի՞նչ ըսել « Երեւոստարդ Հասարապեան », որ կը համարանի յայտարարել թէ երբեք Հնչակեան կուսակցութիւնը հարուած չէ սպանմամբ, ինչ որ պարզ ստուեր թիւն է, ու « յեղափոխականութիւն » բառը կը յանգցնի արտասանել, մոռնալով որ Հայոց մէջ եղբայրասպանութեան ամենէն իրակերպ եւ ամենէն զաւազակարծ այդ « Երեւոստարդ Հասարապեան »-ի պատարար եւ իրենց պետ Սաղաթիւն գործեցին : վատարար սպաննել տալով Հայ ազգին ամենէն սքանչելի զաւակներէն երկուքը, Միսն եւ Զիթեանը . . .

Այդ բոլոր պարտները կ'երեւայ թէ մարդասպանութիւնը շատ ընդունելի եւ գովելի կը գտնեն՝ երբ իրենք են զայն կատարողը, ու շատ գաղապարտելի՝ երբ դրացին է զայն ի գործ գետնը :

Եւ ի՞նչ լրտութիւն՝ վերագրել այս նոր ըսպանութիւնը « դրամաշորթ խմբակ »-ի մը . . . Ի՞նչ անհարգել եւ հակազգային զրպարտութիւն : Դրամաշորթ խմբակ չկայ Հայոց մէջ : Այդ հեղաթիւր Պ. Արփիարեանն ստեղծեց ինքզինքը

պաշտպանելու համար կարգ մը Հնչակեաններու դէմ (զոր տալով ինքն իսկ անօրինակ հերոսներ կը հռչակէր) երբ անոնք, զինքը նկատելով անկարող վարել, եւ մասնիչ, արտաքսեցին կուսակցութիւնէն :

Արփիարեան, որ առնուով կը գաղափարէր Դրոշակեաններու « սեւապրէքեան » մեթոդը, ինքն իսկ առաջնակարգ սեւապրէքեան մը յայտնեց ինքզինքը : Որովհետեւ Դրոշակեանները զինքը իրր գաւաճան կ'ամբաստանէին եւ այդ հիման վրայ տեւորի ալ ենթարկեցին զինքը, Արփիարեան Դրոշակեան վարիչներ « իրաւ կառավարութիւն վարձուած գաւաճաններ » եւ Հայաստանը Հայերէ պարպելու միակ նպատակն ունեցող չարագործներ » հռչակելով : Միեւնոյն բանն է որ ըրաւ յետոյ վերակազմուող Հնչակեան վարիչներուն դէմ. անոնք իրենց դէմ ուղղած ամբաստանութիւնները ջրելու համար, գաւաճանը հռչակելով « առաջնորդ », « դրամաշորթ » : Փառստ : Ո՛ր մէկ հաստ Զեմառեց որ Արփիարեան ինքն իսկ, ուրիշները դրամաշորթ անուանելէ առաջ, ինքը իրր դրամաշորթ ամբաստանուած է . ամբաստանողներն էին « Հրապիւ », Միսնա Զեմառ . այս վերջինը փաստը մէջ բերած էր ընդարձակ յօդուածի մը մէջ, որուն Արփիարեանն ցարդ չէ պատասխանած : Առանց պատասխանելու զինքը դրամաշորթ հռչակելու ըրաւ, ինքը կը շարունակէր ուրիշները դրամաշորթ յայտարարել, միշտ առանց փաստի :

« Յայտնու թիւներ ունեն » կ'աղաղակէր Արփիարեանն տարիներ առաջ, ո՛րք են այդ յայտնութիւնները : Ի՞նչպէս կարելի է ամբաստանել առանց ապացուցանելու : Դրամաշորթը այն անձն է որ անհաստի մը կամ հանրութեան պատմաւորող գումար մը խորեքալորէն կ'ընկարգէ իր անձնական պատմութիւնն ու հաճոյքին գործածելու որոշ կանխամտածութեամբ . ո՛րք է այն վեր. Հնչակեանը որ այդպիսի ցած նկարագիր մը ցոյց տուած ըլլայ : Արդեօք վեր. Հնչակեաններուն կը մեղադրուի որ ցարդ իրենց հաւաքած գումարը հայրենիքը զինքը զրկելու կամ արտաւախումբը հոն մտցնելու կամ նմանօրինակ աւարքներու յե՛ն գործածած . ո՛ր յեղափոխական կուսակցութիւնն է որ իր հաւաքած գումարներուն անբողոքութիւնը հայրենիքի մէջ եւ այդ ձեւով գործածած ըլլայ : Արփիարեանն հրաժանուով Գարակէօզեանի սպանումը 7-8000 տոկի լեցուց Հնչակեաններու գանձանակին մէջ . այդ գումարէն մէկ սանթիմ մը Հայաստան գնաց . ո՛ր . ուրեմն Արփիարեանն այդ գումարը շորթելու համար հաւաքել տուած էր : վեր. Հնչ. վարիչներուն հաւաքած գումարները շատ փոքր էին բազմաամբար հակա գործին որ կայ կատարուելու . եթէ այդպիսի գումարներու վրայ հիմնուելով երկրին մէջ զէնք մտցնել, ողորդել, արշաւանդներ ընել իորձէին, աղէտը միայն յառաջ պիտի բերէին եւ ապագայ կարեւորութիւնները արմատապէս ջնջելու միայն նպատակով պիտի իորձէին : Ապառաւ են, երազած են, յուսացած են մեծ ուժ մը կազմել ներս, եւ յե-

տոյ լրբօրէն գործի ձեռնարկել է. նոյն տառն, կուսակցութիւնը — ինչպէս ամէն կուսակցութիւն — ինքզինքը պահպանելու համար ստիպուած էր անուշտ ծախքեր ընել. հաւաքուած գումարները կ'իրթային ուրիշն կազմակերպութեան պահպանման, եւ անպագայ գործունէութեան ծրագրի հաստատման, թէ այդ հաւաքուած գումարները Վեր. Հնչ. վարիչներն կողմէ գործառնուած են միշտ ինչպէս եւ նպատակաւ յարմար կերպով, թէ անհրաժեշտ մաս մը ի գործ վառարուած չէ՞ արդեօք, թէ կարելի չէ՞ որ այդքան դրամով ընել 'նոյն իսկ իբր նախապատրաստական գործունէութիւն' չստ աւելի քան քան ինչ որ ըրած են, ստորեւ հարցեր են որ կրնան գրել: Վեր. Հնչակեան կուսակցութեան չը գործադանդով, անսեղեպի ըլլալով այդ կուսակցութեան ներքին գործունէութեան, եւ կարող չեմ լիովին պատասխանել այս հարցերուն. կ'ընդգուծուի միայն գաղտնի ինքի ծանօթ իրողութեան երեւն թէ Վեր. Հնչ. կուսակցութիւնը չէ ըրած ամէն ինչ որ կրնար եւ պարտէր ընել իր ունեցած միջոցներով (որինակի համար՝ Եւրոպայի ու Ամերիկայի հայկական փոքրիկներով գործին մէջ չստ աւելի զիւր կարող էր կատարել քան ինչ որ կատարեց, թէպէտ եւ անուշտապէս աւելի քան ըրած է այդ ուղղութեամբ քան Արիւմտեանի օրով): Կ'ընդունեմ նաեւ վա. չական սխալներու, թույլութիւններու, անկարողութիւններու գոյութիւնը. եւ անկողք միտումներ. եմթարիւիով որ «Ազդ»-ն ի յայտ բերած մանրամասնութիւններուն մէջ քառորդը ճիշդ ըլլայ, անհարմար է չընդունել ծանր թիւներ. թիւները զոր ունեցած է Վեր. Հնչ. վարիչութիւնը՝ այդ վերջին տարիներուն մէջ, կուս եւ յատկաւ ղեկավարութեան մը պակաս, կազմակերպութեան անկարողութիւններ, հիւանդ բնկեր մը մահուան ժրկելու համար դրամական ծախսով չսայտում, եւնու կ'ընդունեմ որ աստիճանադարձութիւն, բայց աստիճան չի հետևիլ որ այդ կուսակցութիւնը դրամական կան ընկերութիւն մը եղած ըլլայ կամ թէ 'նոյն իսկ այդ կուսակցութեան մէջ գտնուի իմբակ մը յեղափոխական դրամով պարկին իրեն համար նպատակ ունեցող: Վեր. Հնչ. կուսակցութեան մասին ցարդ բոլոր դրամներուն մէջ՝ մէկ տող մը չունի ուր քսած ըլլամ թէ այդ կուսակցութիւնը անքնիւր կամ միմազօր է եւ իր վարչութիւնը անտապիւտ, ան որ աստիկ կ'ընէր եւ ինչ անտապիւր անվերապա մեծադիմաց ինքնապարծութեամբ — ճիշդ ուղի Պարթիւեանն է. որ այսօր սիւսեւ գոյնիւրով կը ներկայացնէ այդ կուսակցութեան ասարկելիք ի վեր ունեցած ներքին կացութիւնը, մինչյեւ տակաւին մինչեւ 8-9 ամիս առաջ՝ Չայն Հայրենասիրութեան մէջ այդ կուսակցութիւնը կը նկատուի իբր Հայութեան ամենին վիթխար, ուժեղ եւ կատարելա կազմակերպութիւնը: Վեր. Հնչ. կուսակցութեան համակիր եմ եղած, որովհետեւ ես ազգայնական եմ եւ այդ կուսակցութիւնը զուտ ազգայնական ձգտումներու վրայ հիմնուած է եւ կ'ուզէ

իրագործել այն ծրագիրը զոր ես ինչպէս գործնականագործել համարած եմ Հայոց քաղաքական ապագային ապահովման համար: Անա ինչ որ իմ դիրքս կը բացատրէ, եւ ոչինչ աւելի զիրար ըմբռնելի է եւ քնական: Ըսած եմ նաեւ թէ այդ կուսակցութիւնը լաւագոյն ճամբու մէջ մտած, անկի ուժեղ ու գործած դարձած է Ար. փարեանի արտաբնութիւն ի վեր. եւ աստիկապիւրայանի ճշմարտութիւն մըն է: Ըսած եմ թէ այդ կուսակցութեան մէջ կան անկեղծօրէն ազգասէր եւ յեղափոխական կողով եւ անհարմարութիւն ունեցող գործիչներ. իրողութիւն մըն է աս զոր չեն կրնար հերքել ոչ արտաքին յարձակումները, ոչ կուսակցութեան ներքին գծերով պառակտումները:

Եթէ ան ուրիշ թերութիւններ — եւ մեր ո՞ր կուսակցութիւնն է որ ստեղծական կատարելութեամբ կը փայլի — չանալեք որ ուղղորդին այդ թերութիւնները. բայց անուստարկել ամբողջ կուսակցութիւնը, մտածել անոր ամենին կորովի եւ անձուռէ գործիչները, հակազգային արարք մըն է:

Պ. Պարթիւեան, որ այսօր կը կրկնէ Ար. փարեանի ստեղծած «գրումաշարի խմբակ»-ի հեքաթը, պէտք է ըմբռնէ որ եթէ ատ իրաւ ըլլայ՝ ամենին դատաւարական անձը ինչ պէտք է համարուի, քանի որ այդ պարագային իր դրիչը տարիներ ի վեր գիտակցաբար առաջանալ ասարկելի մը ի պատճառ պէտք է նկատուի: Արդուեանի շնորհիւ Վեր. Հնչ. կուսակցութեան օրկանին իբր խմբագիր հրաւիրուած օրէն սկսեալ՝ ասարկելով Պարթիւեանն քսած ու գրած է թէ Արդուեան Հայոց ամենամեծ յեղափոխականն է, «արժեք» մը՝ պարզապէս է Հիւսիս, բայց նմանակ մը մէջ զոր կ'ընդէ Արդուեանին, կը յայտարարէ թէ Արդուեան իր ամբողջ գոյութեան մէջ հարաբար չարագործ մը եղած է միայն, ոչ մէկ օգտակար գործ չէ տեսած, ոչ մէկ գրական լաւակութիւն չէ ունեցած, եւ թէ ինքը՝ Պարթիւեանն՝ հայտնած միմիայն տոնը «գրեթեւաբոլոր» իր գրչովն է որ կատարեց եւ անոր ամբողջ համբաւն ու իրքըր Պարթիւեանն կը մոռնայ որ իր գրիչը զեւ գոյութեան իսկ չունէր երբ Արդուեանն եւ իրեն հետ գրամայորէն նկատուած քանի մը գործիչները՝ Հնչակեան գործունէութեան ամենին տաք օրերուն՝ 98, 99, 96ին՝ Պոլսոյ մէջ անձնադրուեալն են, յանդգրութեան, յեղափոխական ամենամեծ եւ ամենուսուրբ կողովի անմոռանալի ապացոյցներ տուած էին Ու Պարթիւեան չ'անդրադառնար անուանող որ իր այդ բոց նմանակով ամենին անուան է անդամ մը եւ ինքիցինքն է որ կը դատապարտէ. միայն «վարձկան» մը կարող է հերոսի սուտ համբաւ մը յօրինել մարդու մը՝ որմէ ոչինչ կրեք տեսած է լաւ՝ քաղիք «գրեթեւաբոլոր» էն: Բայց եւ վարձկան այ չեմ ըսեր Պարթիւեանին, ինչպէս ըսին՝ աստիճան իր «մտաւարական եղանակներ» 9. Գագաթ մըն է, բարոյական հաւատարակութիւնն զուրկ, այսօրուան սատուածը վաղը հրէշ տեսնելու դա-

առաջարկուած, չղազար մը որ կարող է՝ ողբալի անգիտակցութեամբ մը՝ ամօճէն ցած արարքները կատարել:

Կարելի՞ է աւելի հիւսնդագին ընթացք երեւակայել քան իբր Արդուեանի կողմէ գործուած դրամադրութիւնն համարի խաղար գուժ մարի մը անոր բուժման համար իր ընկերներուն իսկ կողմէ անոր յատկացուած ըլլալը: Եթէ իրօք երեք տարուան մէջ 10,000 տարած ծախսուած է Արդուեանի դրամանման համար, անշուշտ ատիկա շտալլութիւն է. ոչ մէկ կուսակցութիւն իրաւունք չունի շտալլաբար գործածել իր հաւաքած գումարները: Եթէ Արդուեան գիտէր որ իրին համար արամագրուած այդ գումարները յեղափոխական միտակէն կ'ելլէին, պէտք չէր թողլ տար այդպիսի միտում եւ: Բայց չէ՞ որ բուն յանցաւորները անոնք են որ իրենց ազատ կամեով այդ խաղար գողտրութիւնն ընել որոշեցին: Արդուեան մահամբո՛ւ էր՝ ինչպէս Պարթեւեան ինք ալ կը գրէ՝ երբ Ամերիկա հասաւ երեք տարի առաջ, փարթեան ամենանշա՛նաւոր բժշկիկն էր՝ քանի մը ամիսէն կը մեռնի վճռած էին: . այդ վիճակին մէջ գտնուող քայքայուած մարդ մը ամբողջ կուսակցութիւն մը ստորապիեցիկեով գումարներ կորցում իր կրնալ ըլլալ: Եթէ Վեր. Հնչ. կուսակցութիւնը — Պարթեւեանն ալ մէկտեղ — աչքքան դրամ յատկացուցած են Արդուեանը վերակենդանացնելու համար, այդ իսկ արդէն ցոյց կուտայ թէ անոր համար օւնէրէն բուժում սէր եւ սքանչւցում ու անոր կենսաքին պահպանումը անհրաժեշտ էր նկատէին յեղափոխական դրօշին:

Իմ զարկացութիւնն՝ այս դուռնուն մէջ՝ պարէ է ուրեմն, Վեր. Հնչակեան կուսակցութիւնը օւնի թեթուութիւններ, որ այս պահուս հաստցւո՛ւ են քայն քառասային կողմութեան մը: . այդ թեթուութիւնները պէտք է քննադատուին, բայց աշուտ մեծամբ, լրլութեամբ, անաչառ ու անկողմնակալ ոգով: . Սակայն, դրամաշորթ խմբակ անուանել խումբ մը գործիչներ որ տարինեւէ ի վեր կը զարարուն յազային բարձր թաճախ մը իրականացման նպատակու համար եւ որոնք իրենց անձնաւորութեան եւ ազգասիրութեան անհերքելի ապացոյցներ տուած են, եւ այդ վատութիւնը չեմ կարող ունենալ: Անոնք որ, ինքզինքնին յեղափոխական կու՛նչելով հանդերձ, այս դրամաշորթ խմբակի հե՛քիաթը կը յեղեղէն հայ հասարակութեան մէջ, անձեռն: . Վասնել աւելի յեղափոխական դրօշին է որ կը փնտնեն իսկ այդ հեքեաթը օտար մա՛նուլին մէջ՝ տարածողները ամբողջ Հայ ազգին փնտնեցին, Հայոց յեղափոխական կուսակցութիւնները Գամորայի շման աւազակախումբերու համանման կազմակերպութիւններ ըլլալու անարարք համոզում մը թելադրելով օտարներուն:

Ասկից գատ, անոնք որ դրամաշորթ խումբակի հեքեաթին վրայ հիմնուելով կը գատապարտեն Նիւ-Եորքի սպանութիւնը, ուրիշ փնտմըն ալ կը հասցընեն. . այն է որ կը շեղեցնեն հանրային աշարուութիւնը բուն խնդիրէն, որ

է՛. Յեղափոխութեան դրամ տուած չըլլալուն համար հարուստ մը պէ՛տք է սպաննել թէ ոչ, Արիփիարեան տանով «այո՛» բառն է այդ հացքման, եւ գործնապէս: . Պարթեւեան դեռ մինչեւ երեկ «այո՛» կ'ըսէր: Ես ըսած եմ եւ կ'ըսեմ միշտ «Ո՛չ» Ու եթէ «յեղափոխական արամագրութիւնը» ասոր զէ՛մ ինձ ըսէ՛. «բայց յեղափոխութիւնը դրամով կ'ըլլայ, եւ մեր հարուստները՝ եթէ հազար տարի ալ աղաչենք, ազգապահնք, բացառիկք, ստնիկ՝ մը չեն տար», կը պատասխանեմ. «Եթէ հայ ժողովուրդը կ'ուզէ ստրուկ մնալ, արժանի է ըստրուկ մնալու: . սպանութիւնները այդ ստրկախորտ չեն բուժեր»:

Նիւ Եորքի սպանութիւնը, բայ ի ընդհանուր սկզբունքով դատապարտելի ըլլալն եթէ ունի մասնաւորապէս քննադատելի կողմ մը, զոր նայնիկն համանման սպանութիւնները չունէին, այն է որ յեղափոխական թաղթիքի սխալ մըն է միանգամայն, անհեռատես եւ խելագարական արարք մը, որուն արդիւնքները միմային փնտախար կրնային ըլլալ, եւ որուն արդիւնքներուն փնտախար ըլլալիքը առաջուց գուշակել ամենէն դիրքն բանն էր: . Նմանորոշակ սպանութիւններ ցարդ կատարուած էին կովկասի եւ Տաճկաստանի մէջ. եւ այդ ժողովուրդը ձերբակալութեանց, չիփթեթեանց ու շատ մը ողբալի դէպքերու ծնունդ տուած էր, բայց եւ յաճախ յեղափոխական գանձանակին օգտարքը կրնած էր ըլլալ — ինչ որ արարչացում մը չէր նկատեր, բայց կը նշանակեմ միայն իբր իրողութիւն: . Եւրոպական կամ Ամերիկեան քաղաք մը մէջ կատարուած սպանութիւն մը յայտնապէս դատապարտուած էր լոկ ժխտական հետեւանքներ ունենալու: . հարուստները պիտի ապաստանէին հզօր եւ աշխուրջ ոտակալութեան, ոչ մէկ սանթիմ չպիտի տային յեղափոխութեան, եւ սպանութիւնը աւագին սքանախալ յառաջ բերելէն ուրիշ արդիւնք պիտի չունենար:

Նիւ Եորքի սպանութիւնը քննադատելի է նաեւ, քանի որ տեղի կ'ունենար այնպիսի պահուս մը երբ Վ. Հ. կուսակցութիւնը իր գանձով մոլեգին պատակաւորեմ մը մէջ. . այդ պատակաւորեմն ստեղծած պայմանները անխուսափելիօրէն պիտի ծանրացնէին այդպիսի արարքի մը արդէն իսկ անսխալ հետեւանքները: . բոլոր վատութիւնները որ տեղի ունեցան, պէտք էր, եւ կայելիք էր, գուշակել:

Այդ արարքը, ուրեմն, ազգասիրական մեծ ծրագրի մը իրականացման համար հարկ եղած նիւթական միջոցները չգտնուելէն խնդիկեցած մտքերու յուսահատ մէկ գործն է, — եւ եթէ յանդգնութիւնը կը սիրեմ, խելագարական գործունէութիւնը չեմ կրնար ընդունիլ: . իբր այդ թող քննադատեն. . համաձայն եմ, Բայց պարզ չարագործութիւն, աւազակային սպանութիւն մը նկատել այդ արարքը, եւ ալք՝ առանց փնտախ, անխցում թիւն է:

Այդ արարքը ոչ միայն օգուտ չբերաւ հայ յեղափոխութեան, այլ եւ անոր հետեւանքով էր. Հնչ. կուսակցութիւնը օղջալի վիճակի մը հասած է:

Տեսարանը դոր այդ կուսակցութիւնը կը ներկայացնէ այս պահուն՝ անուրի է: Եթէ «Ազգ»-ին հաւատարմը, Պ. Պարթեւեանն եւ իր ընկերներէն ոմանք մատու ապանաւորք ստացած են: Վեր. Հնչ. կուսակցութեան վարիչներ իր-րո՞ց անքան յիմարացած են որ այդպիսի անբա-մաստ որոշումներ տալու ելլեն: Ինչո՞ւ սպաննել Պ. Պարթեւեանը: Որովհետեւ աննկարագիր է: Բայց զինքը կուսակցութեան մէջ անտղիները առջի օրէն գիտէին Պարթեւեանին ինչպէս ան-նկարագիր ըլլալը. ճիշդ այն պահուն սնն կը լո-ղար տիրմի մը մէջ որուն գերագոյն խա-ցուծով եղաւ իրմէ իսկ այսօր «տիքահոյսակ» կոչուած նախագահը. եթէ կը կարծեն թէ — ինչպէս ես ալ պահ մը տոնքերօթաբար ենթադ-րեցի — ան պիտի կարենար սրբազանի իր թե-րութիւններէն եւ իր գրական ձերբերդ օգտա-կար սիրտ ըլլալին յեղափոխութեան, ինչո՞ւ չգիտցան անձնէ ու վարել զինքը, ինչո՞ւ թոյլ տուին որ ան ապուշ, լոբաւնջեղ, արհեստ-բու պաշտօր մը մղէր ամենուն, անիմաստօրին, անհարկեանք, գեհեկօրէն ամենուն դէմ ինչ որ Վեր. Հնչ. կուսակցութեան դէմ բարձրացուց ատելութիւններու ամենէն բարձր չըլլալարիսպը զոր ո եւ կուսակցութիւն երբեք ճանչցած ըլ-լաւ եւ որ անս յայտ՝ ճիմաժամակ պահու ու մէջ՝ ամէն կողմէ կը կանգնէ՝ այդ կուսակցու-թեան կործանումը ցանկալով: Պարթեւեանին այսօրուան ընթացքը բնական հետեւածակն է այդ վարչական երկարատեւ սխալին, եւ անհան-գործելի: Կը գտնեմ որ մաշու սպանաւորք ուղ-ղուել անձի մը դէմ որ անպատասխանատու է ըստ իս, որովհետեւ ուրիշ կերպ չի կենար ընկել, այդպէս զգայու եւ գործելու դատապարտուած է բնութիւնէն: Ասիկա այնքան անճոճի կը թուի ինձի, որ չեմ կրնար հաւատար թէ իրօք այդպիսի որոշում մը արուած ըլլայ: Բայց «Ազգ»-ը ոչ միայն կը հաւատայ ատոր, այլ եւ ինքն ալ փոխադարձ սպանութեանց սպառնալիք մը կը չողացնէ յակնակ: Եստինս յիշուած երեք Հնչ. չակեաններու գլխուն: Սուրբան Համբարձում աչքը լոյս:

«Սուրբան Համբարձում» ըսի. գէշ չէր ըլլար որ այդ բոլոր իրարու դէմ մոլեղումն «Հայոյ»-երը, բոլորն ալ, այս անուան երկվայրկեան մը չկոր-սեցնէին՝ իրենց մաքէն: Հայ Հայու դէմ պա-շտօր թիրեւս այդքան բուռն ու վայրագ պիտի չդաճար եթէ ամէն Հայ ամէն վայրկեան խոր-հէր թէ իր բոլոր ատելութիւնը եւ իր բոլոր ու-ժերը պարտաւոր է կերտնացնել Համբարձում ու իր մարմնաւորած լեծփիմն դէմ:

Սպանութիւնները Հայերու միջեւ՝ անտա-նելի, զարչելի երեւոյթ մըն են: Դրօշակեան-ները, նոյն իսկ եթէ համոզուած էին ատելուի՞ թէ Արիւստեան մասնիշխի զի կատարած է, պէտք չէր այնքան թիթիւ փութկոտութեամբ

սպաննել փորձէին մարդ մը որ հակառակ իր բոլոր թիրեւսներուն իր անտարաձակ ձեր-քերով օգտակար ալ եղած է հայ ժողովրդին ու զրականութեան, եւ որ չի կրնար ըստ իս՝ իրական դաւաճան մը ըլլալ, այլ մարդ մը որ իր ծայրայիշ թիթիւութեամբ կարող է մարթ կատարել գործեր որ մասնութեան համարժեք են, Վեր. Հնչակեաններն ալ աւելի խելացի եւ աւելի ազնիւ բան մ'ըրած պիտի ըլլային՝ եթէ ա՛յս տրամաբանութեամբ վարուելով՝ երկրոր-դեց ուզած չլրլային Դրօշակեանց սխալը: Գնեց իսկ չուշիմ ըսելու թէ Հնչ. Հնչակեանները պէտք չէր սպաննել սային Սիսուն ու Զիթնեանը. այդ արգէն զուտ ոճիւր էր, համոտական արարք մը: Գիտի բսմ մակաւն թէ Վեր. Հնչակեան վրի-ժառուները լաւագոյն պիտի ընէին մատուլին թողով մարդասպաններուն խարանձուք: Նոյն-պէս եւ Դրօշակեանները, փոխանակ վարդոն սպաննել փորձելու, լաւագոյն էր որ բարոյս-կան պատժով գոհանային: Ետքը զեւ կարելի է երկարել, « Յեղափոխական կարգապահու-թիւն », « մաքրագործութիւն », « դաւաճանու-թեան պատուհանութիւն » եւ այլ ասպարիս բառեր պիտի նետեն երեսիս՝ գրեմք: Ես պիտի կրկնեմ իմ յանկիրգս. « Հայ Հայու մէջ սպանութիւնը անտանելի, գարշելի է », ինչ ալ ըլլայ զոգա-պանաճար. — իսկ արտասանման մէջ՝ ան կրկնապէս դատապարտելի է եւ վնասաբեր: Անն է այդ ճամբան, եւ մեր ներքին պատա-տումները սաստկացնելու եւ օտարներուն մօտ միշտ զգուելի դարձնելու: Միայն կը ծառաէ: Հարիւրաւոր հայ մայրիկ ու աղջիկներ կան ու բոնոց բոնաբարուած պատուան վրէժը չէ լուծ-ուած. կոխառուած ազգ մը կայ որուն կեանքի ու մահուան հարցը կը մնայ վառնկուած. հայ կորովը ատոր, միայն ատոր պէտք է նուիր ինքզինքը: Հայ Հայու մէջ պայքարին համար՝ խօսքը, գրիչը բաւական են. անպզամ, բարո-յագուրիկ, ազգային գործին արգելք եղող Հայի-րուն դէմ լաւագոյն ինքնապաշտպանումը՝ ա-նոնց արտաքսումն է գործուն կազմակերպու-թեանց չըլմանակէն եւ բարոյական խարանձուք: Վերջի, ու, երբ Հնչակեան Սիւնը խողովողուե-ց Դրօշակեանէ մը, Սուրբան եւ իր ընկեր-ները այդ իմաստուն մեթոդին հետեւեցան՝ զըս-պելով իրենց չարքերուն մէջ փոխադրող վրէժ-ինդրական ձգտումները եւ ոճիւրին չուզեցին օճերով պատասխանել:

Պարարչութիւն, հեռատեսութիւն, տղ-գային ինքնանուր չար միշտ գերապահել կու-սակցական շահէն, միշտ ի նկատի ունենալ ու սարակաղ թշնամի եւ ներքին թշնամութիւն-ները սաստկացնող ոչինչ ընել, — անա՛ ճամբան: Արտասանման Հայութիւնը տակնուրէրայ ընել. փոխադարձ սպանութեանց պզգալի չըլման մը բանալ, հայ յեղափոխութիւնը միշտագոյն ոտտկանութեան օրակարգին դիտարու հարցե-րէն մին դարձնել, աս չէ անշուշտ Հնչակեան-ներուն նպատակ, եւ ինչպէս ալ ազգասիրա-կան ըլլան ներքին ձգտումները որ այս ճգնա-

ժամը երեւան բերին, արդիւնքը միայն ու մի-
այն աղետաբեր է՝ նոյն իսկ ազգային տեսակե-
տով ։ Տարիներով Armenia հրատարակել ամե-
րիկեան հասարակութեան համակրանքը հայկա-
կան դատին վաստկելու համար, եւ առիթ տալ
մէկորեւան մէջ ամերիկեան ժողովուրդը կատարել
թշնամի դարձնելու Հայոց, յիմարեթիւն է ։
Կենթադրեմ որ Վեր. Հնչ. կուսակցութեան
Վարիները պիտի գիտնան ապացուցանել իրենց
պաշարուն խոսկանութիւնը ։
Անհրաժեշտ է այդ վերահաստատելու հա-
մար Վեր. Հնչ. կուսակցութեան հաւ արակցը-
նութիւնը ։ Եւ այդ հաւասարակշռութեան վե-
րահաստատումը պէտք է բաղձալ ամէն Հայ որ
ազգասէր է ։ Որովհետեւ այդ կուսակցութիւնը,
ինչ թերութիւններ ալ որ ունեցած ըլլայ, իբր
ազգային ու կուսակցութիւն՝ արամաքանութեան
պէտք է համակրութիւն ու պաշտպանութիւն
գտնել ամէն ազգասէր Հայու մօտ ։

Վերջին յօդուածի մը մէջ ։ կարեւոր դա-
տած էի որ Վեր. Հնչակեան հեղինակաւոր դէմ-
քերին մին, օրինակ՝ Պ. Սվազիան, գար Եւ-
րոպա պտոյտ մը ընէր՝ եւ Լա Հէյի վեհաժողո-
վին առթիւ խորհրդակցական հանդիպում մը
տեղի ունենար Մուրատի, Անգրանիկի եւ իր
միջեւ ։ Դրօշակեանները ու եւ Քայլ չափին
այդպիսի հանդիպում մը զիրացնելու համար,
եւ իրենց ընդդ. ժողովին մէջ Մուրատի ի նպատակ
Միութեան հրաւերին ու ժառանգան պատասխան
առնելու ։ Իսկ Պ. Սվազիան տեղէն չիբերաց ։
Բայց եւ նորէն չեմ յուսահատուած ։ Լա Հէյի վե-
հաժողովը պատրուակ մըն էր՝ ինծի համար ։ Այդ
վեհաժողովին առիթն անցաւ, բայց հայկական
դատը միշտ կը մնայ բաց, աւելի քան երբեք
ոչքայի վիճակի մէջ ։ Առաջարկութիւնս կը
կրկնեմ, եւ այս անգամ՝ հետեւեալ ձեւով ։ Պ.
Սվազիան — կամ ու եւ հեղինակաւոր Վեր.
Հնչակեան մը, զոր Հնչակեաններուն կ'իյնայ
նշանակել — կուգայ Եւրոպա եւ յաւան իր ըն-
կերներուն ինքն իսկ տեսակցութեան մը կը
հրաւիր Մուրատը եւ Դրօշակեան հեղինակա-
ւոր գործիչ մը, (Անգրանիկը կամ ու եւ կա-
րեւոր Դրօշակեան մը) ։ Միութեան խնդիրը չէ
այլ եւս որ պիտի յարուցուի այդպիսի տեսակ-
ցութեան մը մէջ ։ յայտնի է որ Դրօշակեանք
չեն ուզեր Միութիւն, անօգուտ է պնդել. առ-
կից դատ, քանի որ Դրօշակեանք ինչպէս եւ
հին Հնչակեանք այսօր ընկերաբարականութեան
մէջ չենտեղեկտեղ աւելի խոր կը մտնեն, բացար-
ձակ միութիւնը անկարելի է ազգայնական կու-
սակցութեան մը եւ ընկերաբարական կուսակցու-
թեանը միջեւ ։ Բայց քանի որ թէ՛ Դրօշակեանք
եւ թէ՛ հին Հնչակեանք ընկերաբարականութեան
մէջ միմեկեւոր հանգիստ թաքեցաւ հակասու-
թեան մը՝ հայկական դատը չեն ուզեր լա-
նել, ուրիշն կարելի է համարալի գործակցու-
թեան համաձայնութիւն մը հայկական դատի
մասին Վեր. Հնչ. կուսակցութիւնը ունի գործ-
ծուանութեան յատուկագործ մը՝ զոր իր վարիչ-
ները տարիներէ ի վեր ուսումնասիրութեան

սունցուցած են, եւ ունի անձնուէրներու բա-
րոյական թանկագին ուժ մը ։ Իր արամաքած
դրամական ուժը անբաւական է ի գործ դնելու
համար այդ ծրագիրը. հայ բոլոր ազգասէրները,
հարուստ, ազգասէր, կրօնական, աշխարհական,
բոլորն ալ այդ կուսակցութեան օգնելու էին ։
Իբրին. — ու յանցաւոր են չըրած ըլլալուն(1)
—, Յուսահատ ճիգեւոր գալարով դարձ-
եալ՝ այդ բոլոր անտարբերութիւնները հայեցնե-
լու համար, աւելորդ է, ժամանակի եւ ուժե-
րու կորուստ է ։ Դրօշակեան կուսակցութիւնը
ունի դրամական մեծ կարողութիւն եւ բաւա-
թիւ բարոյական ուժեր ։ Ինչ Հնչակեանք ունի
բարոյական կարեւոր ուժեր եւ որոշ չափով
նիւթական միջոցներ ։ Վեր. Հնչակեան ներկա-
յացուցիչը Դրօշակեան եւ Հնչակեան ներկա-
յացուցիչներուն կը պարզէ վերակազմեալ Հնչակ-
եանք գործունէութեան յատուկագործ, եւ կա-
ռաւարկէ անոնց որ՝ եթէ համաձայն են՝ աշխա-
ցին ։ Կը կարծեմ թէ՛ տեսակցութեան հրաւերի
մը ոչ մէկ հին Հնչակեան, ոչ մէկ Դրօշակեան
չի կրնար մերժողական պատասխան տալ ։ Ու
տեսակցութեան մէջ, հարցը, դրուած՝ այս որոշ,
մասնաւոր, գործնական ձեւով, չի կրնար նպաս-
տաւոր լուծում չտալու ։ Վեր. Հնչակեանք
չեմ կործիր որ ըսեն թէ իրենց կուսակցական
արժանապատուութիւնը թոյլ չի կրնար տալ որ
տկարութիւն մը խոտուանելու, հակառակ որ
կուսակցութիւններէ օգնութիւն խնդրելու ձեւ
առնին Ազգաստիւն Թուրքիոյ, զիսկայով հա-
ղած որ այս յեղափոխական կուսակցութիւն-
ները հակառակորդներ են իրենց, զանոնք հրա-
ւերիցին Համաժողովի մը եւ անոնց աշակու-
թիւնը խնդրելին իրենց ծրագրին. համաձայնու-
թիւն չկրցաւ գոյանալ, այդ ուրիշ հարց է ։
Թուրքերուն եւ Հայերուն միջեւ բաժանող պատ-
ճաններ չատ կան ։ Ինդիլին այն է որ ազատ-
ական Թուրքերը այդպէս վարուելով խելացի ըն-
թացք մը ունեցան, Հայ կուսակցութեանց մի-
ջեւ անհամաձայնութիւն մը չի կրնար ըլլալ
այսպիսի հարցի մը վրայ ։ Ու կուսակցական
ինքնասիրութիւնը պէտք է խոնարհի ազգային
գերագոյն չափին աղիւս ։

Վեր. Հնչ. կուսակցութիւնը այսպիսի քայլ
մ'ընելով՝ վիհանձն ազգասիրութեան ապացոյց
մը տուած պիտի ըլլայ, եւ միանգամայն՝ ատոր
մէջ պիտի գտնէ լաւագոյն միջոցը՝ զինքը զըր-
պարտողներուն դէմ ինքնապաշտպանութեան ։
« Անա՛, պիտի ըսէ Վեր. Հնչ. ներկայացուցիչը
իր Դրօշակեան եւ հին Հնչակեան պաշտօնա-
կիցներուն, ա՛նա՛ թէ մենք ինչ ենք, ինչ ընել
կ'ուզենք, եւ թէ ինչ ըրած ենք ցարդ՝ Դրօշ
պատրաստելու համար ։ Կ'ուզե՞ք գործակցել ։ »

Այս է իմ առաջարկութիւնս ։ Կը ներկայա-
ցնեմ զայն՝ համազուտ ըլլալով որ անոր իրա-

(1) Թէ ինչու, ե ինչքան, յանցաւոր եւ, մանա-
ւանդ մեր հարուստները, պիտի քաջասիրտ յայտը յոգ-
ուածով մը ։ Կը հարուստները պէտք չէ որ սպաննուին,
բայց ԲԻՐԱՐԱՐ ԹԻՄԻՍ

կանացու մը օգուտ միայն կրնայ բերել ո՛ր միայն վեր. Հնչ. կուսակցութեան, այլ եւ, ու մանաւանդ, հայկական դատին :

Ա. Զ.



ՀԱՅ ԱՐՈՒՆԵՍԸ ԵՒ ԲՈՂԱՅԻՆ ՄԵԶ

Ի նպաստ Վանայ սովեալներուն, ժրնէլի հայ ուսանողութիւնը հայ երաժշտութեան նըսաւանդանէս մը տուա յունիս յին՝ քաղաքին Բունարկաթուարին մէջ սրահին մէջ, հովանաւորութեամբ ծանօթ հայասէր Պ. Լէոփոյ ծաւրի։ Ուսանողութիւնը հրաւիրած էր Կոմիտաս վարդապետը՝ որպէս զի կազմակերպէ երգեցիկ խումբը եւ զեկամարէ նուագահնդէսը, հրաւիրած էր նաեւ Պ. Զօպանեանը՝ հայ երաժշտութեան եւ բանաստեղծութեան վրայ բանաստեղծութիւն մը արտասանելու, եւ Պ. Շահ-Մուրադեանը՝ իր հօր ձայնին աշակցութեամբ հանդէսին փայլն աւելցնելու, նուագահնդէսին մասնակցեցան նաեւ Պ. Շէրխանեան, Նըրբաճաչակ համակրիչ պարիթոն մը, տիկին Շէրխանեան՝ շքեղ տաղանդով զայնակարարուհի։ Խումբը կազմուեցաւ հայ ուսանողներէ եւ ուսանողուհիներէ, որոնց կ'աշակէին նաեւ քանի մը զինքարուհտասէր Հայուհիներ ու ուսուսանողներ։ Նուագահնդէսը մեծ յայդողութիւն ունեցաւ։ «Ժուրնալ տը Ժրնէլ» և, «Թրիպիւն տը Ժրնէլ» եւ «Լա Սիւրիս» թերթերը ջերմ համակրութեամբ լի յօդուածներ նուիրեցին անոր։ Հասցոյթը եղաւ մօտ 2000 Քր.։ Պ. Զաւր, խանդավառութեամբ իր զեղարուեստասէրն էր մարդասերի ամենասիրելի. զգացմանց մէջ՝ որոշեց նուագահնդէսին բոլոր ծախքերն իր իրականէն վճարել, որով՝ արով արագական հասցոյթը ուղարկուեցաւ Վան։

Լօզանի հայ ուսանողներուն Արմենիա նորահաստատ ընկերութիւնը հրաւիրեց Պ. Զօպանեանը Լօզանի մէջ արտասանել բանաստեղծութիւն մը Հայոց բանաստեղծութեան մասին. Կոմիտաս վարդապետը հանձնեալ իր աշակցութիւնը շնորհել այդ բանաստեղծութեան՝ երգելով մէկ քանի հայ եկեղեցական եւ ժողովրդական երգեր. Համալսարանին վերատեսուչը, Պ. ար Լօֆ, ձրիաբար տուա. Համալսարանին մէջ սրահը, եւ յանձն առաւ ինչ իսկ նախագահել երեկոյթին եւ քանի մը քառօժ հասարակութեան ներկայացնել զորոնք ու գործիչները։ Մօտ հազար հոգի ներկայ էին, եւ հայ բանաստեղծութիւնն ու երաժշտութիւնը յաղթական ապագորութիւն մը գործեցին Լօզանի ունկնդիրներուն վրայ։ «Կազէթ տը Լօզան» խանդավառ յօդուածով մը ներբողել հայ ցեղին զեղարուեստական բարձր կարողութիւնները։

Ժրնէլի եւ Լօզանի հայ ուսանողները որ ամենամեծ համերաշխութեամբ, ազգասիրական եռանդով ու անձնուիրութեամբ աշխատեցան այդ երկու երեկոյթները կազմակերպելու, ջերմ շնորհաւորութիւններ եւ զօգնատնտու արժանիքներ։

— Թուրքին «Մոմէնթ» և լրագիրը ծաւրթթի ստորագրութեամբ բնդարձակ յօդուած մը հրատարակած է les Trouveres Arméniens գրքին վրայ. խալաղի քննադատը սքանչալցմամբ կը խօսի մեր աշուղներու բանաստեղծութեան մասին։

— Հռոմի Արքայական Մասնադպարանի մատենադարանապետ եւ ծանօթ գրադէտ Տօմէնիթ Զամիոյի «Լա Վիթա Լիթթիերարիա» թերթին մէջ հրատարակած է խալալերէն թարգմանութիւն մը Պ. Զօպանեանի Հիւսնդանցը թերթուածին։

Բազմակիպը իր Յուլիո-Օգոստոս թիւին մէջ հրատարակած ըլլալով ամբողջական թարգմանութիւնը գուրցերական եւ խալալական թերթերու վերոյիշեալ յօդուածներուն, աւելորդ կը նկատենք կրկնել այստեղ միեւնոյն աշխատութիւնը։

Պ. ՄՈՒՂԱՅԻՆԵԱՆԻ ՄԱՀԸ

Անահնիկալ եւ անգութ հիւանդութիւն մը մը մէկ ամուսան միջոցի մէջ զգեստեց Պ. Մուղաշեանը եւ տարաւ զայն։ Մուղաշեանին ու նուր ծանօթ է Անանիոս ընթերցողներուն։ Իր թիւորի քննուշ ու փափուկ ձայնը, իր զգայուն երգեցողութիւնը իրեն կը խոստանային փայլուն ապագայ մը։ Նուագահնդէսներու մէջ, ինչպէս եւ փարիզեան բարձր դասակարգի սալոններու մէջ, յանձն երկած էր հայկական երգեր եւ համակրութիւն ու սրանչառութեամբ հրաւիրած էր զէպի իր ցեղը։ Խորին տխրութեամբ է որ կ'արձանագրենք այս կորուստը։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Ա. ԶՊԱՆԵԱՆԵ

Մ. ՊԵՇԻԿԹԱՇԵԱՆԻ

ԿԵԱՆՔԸ ՈՒ ԳՈՐԾԸ

ԳԻՆ 5 ԳՐԱՖ

Le Gérant : FRÉDÉRIC MACLEA
Imp. D. DOGHRAADJIAN
18, Rue des Gobelins, Paris.